

<p>Դասընթացի անվանումը՝</p> <p>Տևողությունը՝</p> <p>Ժամանակահատվածը՝</p> <p>Անցկացման վայրը՝</p> <p>Մասնակիցների առավելագույն քանակը՝</p>	<p>«Աշխատանքային պայմանագրերի կնքման, կատարման և դադարման հիմնահարցերը ՀՀ աշխատանքային իրավունքում»</p> <p>16 ակադեմիական ժամ</p> <p>2012թ.</p> <p>ՀՀ վճռաբեկ դատարանի կոնֆերանսների դահլիճ</p> <p>25</p>
--	---

Դասընթացը նախատեսված է ընդհանուր իրավասության դատարանների դատավորների, ինչպես նաև դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց համար:

Դասընթացն անդրադառնում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունքի (օրենսդրության) հիմնական ինստիտուտներից մեկի՝ աշխատանքային պայմանագրին, մասնավորապես, դրա կնքման, պայմանագրի գործողության ընթացքում ծագող հարցերին ու դադարման հիմնական խնդիրներին: Դասընթացի ընթացքում քննարկվում են, մասնավորապես, հետևյալ հարցերը.

- Աշխատանքային պայմանագրի՝ իբրև որոշակի տեսակի աշխատանք կատարելու առթիվ կնքվող համաձայնության ինքնուրույն տեսակի առանձնահատկությունները:
- Աշխատանքային պայմանագրի կնքման եղանակները և աշխատանքային իրավահարաբերությունների ծագման իրավաբանական ձևակերպումը:
- Ընդհանուր իրավական, ճյուղային և միջճյուղային սկզբունքների կիրառումն աշխատանքային պայմանագրի կնքման, կատարման և դադարեցման ոլորտներում:
- Նախապայմանագրային աշխատանքային վեճերը և դրանցով կայացվող դատական ակտերը:

- Աշխատանքային պայմանագրի կատարման հիմնական պայմանները, օրենսդրական և պայմանագրային կարգավորման հարաբերակցությունը:
- Աշխատանքային պայմանագրի փոփոխությունը. աշխատողին այլ աշխատանքի փոխադրելը և(կամ) աշխատանքի պայմանները փոփոխելը:
- Աշխատանքային իրավահարաբերությունների դադարման ընդհանուր կարգը և պայմանները:
- Աշխատանքային պայմանագրի լուծումը (դադարեցումը աշխատողի, գործատուի և պայմանագրի կողմ չհանդիսացող անձի նախաձեռնությամբ):
- Աշխատանքային պայմանագրի դադարման հետ կապված վեճերը և դրանց քննարկման առանձնահատկությունները:
- Աշխատանքայի վեճերով կայացվող դատական ակտերի կատարումը:

Դասընթացը վարում է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Գևորգ Պետրոսյանը: